

Էս օրերի ժխոր վակզալից  
Իմ երգը, իմ ձայնը լսեք...  
Ես Գուրգեն Մանարի  
Խեղճ «Պետան» եմ Երեւանի:  
Երկար տարիներ տանջւեցի,  
Գիշերներն անքուն մնացի...  
Եւ Չարենցից բառեր,  
Ու Տէրեանից յանգեր,  
Առի, կերտեցի  
Եւ ինձ Պօօէտ շինեցի:  
Բայց հիմա՝  
Օրերի էս ժխորում  
Ես խարխափում եմ,  
Ես խարխուլ եմ:  
Յանգերս հատան,  
Էլ վանկ, յանգ չկան.  
Ու ման եմ գալիս  
Սիամանթոն  
Վարուժան՝

Որ ինձ յանգ, վանկ տան.  
Բայց ափսոս նրանցումն էլ  
Ոչինչ չկան...  
Եւ ես ցաւից խելագար,  
Դարձել եմ ներկարար:  
Ու հիմա Երեւանում  
Աքովեանում  
Ներկում եմ շալվար - չալ:

Ներկարարութեան մասնագէտ եմ  
Ներկում եմ պատեր ամէն տեսակի,  
Ճաշարանի,  
Խոհանոցի,  
Ունիմ բազաժ ամէն տեսակ գոյների,  
Թէ կանացի և թէ լացքի:  
Դիմել Երեւան՝

ԳՈՐԳԵՆ ՄԱՆԱՐԻ

## ԿԵԱՆՔԻ ՎՐԷԺԸ

(Հեղ. Փօլ Պուրժէ Թրգմ. Կոմիտաս Կոմիտան)

Ա.

Վրէժս լուծել: - Ինչպիսի շեշտով ըսիք  
Երէկ, այս խօսքը, սիրելիք իմ Տարայոյ: Վե-  
րջստին տեսայ ես՝ ձեր նայուածքին մէջ՝  
այն սառն և անայլալ բոցը՝ որով կը շո-  
ղային ձեր աչքերը Վէրտէճի մէջ, երբ ձեր  
գնդապետը կ'իմացնէր ձեզի մօտաւոր ելք մը  
խրաժնեղէն: Նա կը սիրէր այն բոցը որ կը  
փայլէր այդ նախասիրած տեղակալին բի-  
բերուն մէջ: Տասներկու տարի վերջը, և  
յայտնած դիտաւորութիւններուն մէջ, այլ-  
եւս այն բոցը նոյն իմաստը չունի: Ար-  
դարեւ Պր. Փօլեան իր երիտասարդութեան  
և պատերազմի ընկերին հանգէպ գարշելի  
վարմունք մ'է ունեցած: Նա գիտէր թէ  
դուք սաստիկ և ոգւով չափ կը սիրէիք

ձեր խօսեցեալ օրիորդը: Թէ նա չարա-  
չար գործածեց այն մանկամարդ աղջկան  
միամտութիւնը և անոր ծնողաց ընչաքաղ-  
ցութիւնը, ինքը բազմիցս միլիոնատէր՝  
զայն ձեզմէ յափշտակելու համար՝ երբ  
դուք զինուորական պաշտօնով Մարոք կը  
գտնուէիք. անորակելի է այս, կամ լաւ  
եւս, շատ անարգական է:

Բնական է որ այսպիսի դաւաճանու-  
թիւն մը սաստիկ զայրոյթ յարուցանէր  
ձեր սրտին մէջ, նաեւ շատ բնական է  
որ դուք ծանրապէս փորձուիք այն մատնու-  
թեան տալ իր արժանի պատիժը:

«Որովհետեւ Արժանթին մեկնած է նա  
այնտեղ հօրը գործերը կարգադրելու հա-

մար», ըսիք ինձի, «հարկադրուած եմ իրեն  
սպասել: Ազատ չեմ անոր հետեւելու: Ես  
հարստութիւն չունիմ, և ծառայութեան  
մէջ եմ: Բայց նա պիտի դառնայ և զիս  
պիտի գտնէ Պուա տը Պուլոյնի պողոտային  
իր տան դրան դիմաց, համազգեստովս, որ-  
իւ պէսզի զայն խորագանեմ իր առաջին ել-  
քին: Պիտի մենամարտինք, վասնզի այն  
Յուդան, զարմանալի բան, վատ մը է, և  
եթէ մեզմէ մին հոն գետին չտապալի,  
վերստին պիտի սկսիմ: Պէտք է որ կամ  
նա մեռնի և կամ ես»:

Կը տեսնէք թէ որքան խորունկ ազդած  
են վրաս ձեր խօսքերը՝ զորս բառ առ բառ  
կը կրկնեմ ձեզի: Անոնց բոլոր վանկերը կը  
հնչեն ալանջի մէջ ձեր ձայնի ելեւէջով:  
Այնքան յուզուած կը տեսնէի զձեզ՝ որ չու-  
զեցի պատասխանել: Շատ լաւ հասկցայ  
դեցի պատասխանել: Շատ տրամաբանել ան-  
որ այն ժամուն ձեզի հետ տրամաբանել ան-  
օգուտ պիտի ըլլար, ու թերեւս վտանգա-  
ւոր զմեզ միացնող բարեկամութեան հա-  
մար, հակառակ մեր հասակին տարբերու-  
թեան: Կարող էի, աստիճանիս ինձ տուած  
բարոյական գերակայութեամբ (այս եղաւ  
առաջին մտածումս) յիշեցնել ձեզի թէ  
զինուորական պարտականութիւնը կ'արգի-  
լէ մենամարտը պատերազմի մը վաղոր-  
դայնին՝ ուր երկրորդ պատերազմի վը-  
տանգի մը երկրորդ կայ: Կեանքը վտան-  
գի դնել մենամարտով, և այն՝ անձնական  
վրէժի մը համար, երբ մարդ պատին ունի  
հարկաւորապէս ժապաւններ կրելու, այս  
բանը դասալքութիւն կը կոչուի:

Գիտեմ որ պիտի ճշտեմ այն թուղթը  
որուն վրայ կը գրեմ այս բառը՝ որ լեզուին  
ամէնէն վիրաւորիչն է մեզի նման զինուոր-  
ներու համար, որոնք անկեղծօրէն կը դաւա-  
նին բանակին օրէնքը: Բայց ձեր զինուո-  
րական խիղճն ու գիտակցութիւնը զայն  
ձեզի արդէն ազդարարած էր, և դուք չա-  
փէն անդին անցած էիք: Ես լռեցի, կ'ըսեմ  
ձեզի դարձեալ, չգրգռելու համար վիճաբա-  
նութիւն մը՝ ուր չպիտի կարենայի զսպել  
զիս: Արդարեւ, ստացայ հանգստեան թո-  
շակի իրաւունքս և ճիշդ այս պատճառաւ  
թերեւս մեր արուեստին միաստիքը նոյն-

քան և աւելի վառ կը մնայ սրտիս մէջ  
քան այն թուականին երբ Էրնէսթ Փսի-  
խարի մեր սքանչելի բարեկամը մեզի կը  
կարդար Շերպուրկի մէջ՝ Չիկապոլիս այն-  
քան սիրելի էջերը: Այն եթէ նա դեռ ապրէր  
անոր պիտի ուզէի յանձնել այս նամակը,  
որուն մէջ պիտի ուզէի ձեզի խօսիլ, ոչ  
իրեւեւ սպայ, այլ իբր պարզ անհատ, և  
առանց պնդելու խրատի մը վրայ զոր հիմա  
զիտէք արդէն: Կ'երեւակայեմ թէ այս մա-  
սին երբեք չէք տարակուսած:

Ուրեմն Շերպուրկի և Վէրտէճի ձեր  
գնդապետ Լանթընաքսը չէ որ կը գրէ ձեզի  
այսօր, այլ ծերունի մը - երկու ամիս յե-  
տոյ վաթսուներեք տարեկանս պիտի լրա-  
ցնեմ - որ կը հաւատայ տարբեր խորհուրդի  
մը, այսինքն կեանքի տարիներուն: Այս  
հաւատքը կը կայանայ էապէս այն հա-  
մոզման վրայ՝ թէ երէցները փորձառու-  
թիւնն են կրտսերներուն և թէ անոնք պար-  
տականութիւն ունին անոնց հաղորդելու  
այդ փորձառութիւնը:

«Այս հովանին ինձ պի' պարտին իմ յաջորդներս»:

Լաֆօնթէնի այս յուզիչ տողը շատ ան-  
գամ կրկնած եմ ես իւրովի և երէկ ալ  
դարձեալ՝ երբ զձեզ թողուցի:

Եւ միշտ կ'ըսեմ՝ ծերանալէս ի վեր,  
հաշուելով կեանքիս մնացած քիչ օրերը.  
— «Այս վերջին օրերս ալ պիտի կիրարկեմ  
ծառայելու դարձեալ»: Ծանօթ է ձեզի ծե-  
րունի բարեկամիդ բառը, այն զոր կ'ը-  
սէիք քիչ առաջ: Ծառայել: Եւ ինչպէս:  
Տալով՝ երբ որ առիթը ներկայանայ - և  
ահա այսօր կը ներկայանայ - իմ կրած  
վիշտերս իբրեւ օգտակար ազդարարութիւն  
ամէն անոնց՝ որ իմ կրածներուն նմաննե-  
րու մէջ գտնուին: Ես այս վիշտերուն յո-  
ռեպէս համբերեցի, և կ'ուզեմ սորվեցնել ա-  
նոնց որ լաւ համբերեն. վասն զի կը պա-  
տահի որ մարդ դժկամակօրէն տառապի:  
Այսպէս կը խօսէր իր մահուան անկողինին  
մէջ սուրբ քահանայ մը, Հայր Թրէկառ,  
որ մեր մէկ բարեկամէն կը խնդրէր ա-  
ղօթել իրեն համար:

«Աղօթել ձեզի համար, Հայր», կը պա-